

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
2- 23.41.01 «ՉԱՐԴԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ ԻՐԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2-23.41.01.02-3 «ՊԱՏՐԱՍՏՈՂ` ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

| Անվանումը | Նկարագիրը |
|--|---|
| 2 | 3 |
| Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը և կոդը | Մասնագիտությունը` «Չարդակիրառական նշանակության խեցեգործական իրերի պատրաստում» Որակավորումը` «Պատրաստող` խեցեգործական գեղարվեստական իրերի» Մասնագիտության կոդը` 2-23.41.01 Որակավորման կոդը` 2-23.41.01.02-3: |
| I. Դերը | Խեցեգործական գեղարվեստական իրերի պատրաստողը տարբեր կազմակերպարավական տնտեսաձևի խեցեգործական իրերի արտադրության կազմակերպություն-ներում կամ որպես անհատ ձեռներեց կատարում է խեցեգործական իրերի պատրաստում և ձևավորում, հաստոցների, սարքավորումների շահագործում, ձեռքի ու մեքենայական գործիքների կիրառմամբ զարդանախշերի գեղարվեստական փորագրում, դեկորատիվ կիրառական իրերի զանգվածային և խմբաքանակային պատրաստում և ձևավորում, անվտանգության տեխնիկայի և հրդեհային անվտանգության կանոնների պահպանում: |
| II. Խնդիրների բնագավառները և աշխատանքային գործընթացները | |
| Խնդիրների բնագավառ 1. | Նախապատրաստական աշխատանքների կատարում |
| Աշխատանքային գործընթացները | 1) Աշխատանքային միջավայրի նախապատրաստում` Նյութի, գործիքների, տեխնիկական սարքավորումների առկայության ապահովում գեղարվեստական խեցեգործական իրերի պատրաստման համար, 2) արտադրական սանիտարական պայմանների ու հիգիենայի պահանջների ապահովում: |
| Կատարման չափանիշներ | Կատարում է նյութի նպատակային ընտրությունը, կարողանում է ճիշտ գնահատել կավի որակը, տեսակը և |

| | |
|--|--|
| | <p>բաղադրությունը (անհատական աշխատանք, զանգվածային արտադրություն), ճիշտ է նախապատրաստում կավե զանգվածը (հունցում) խեցեգործական իրերի զանգվածային արտադրության համար, պատրաստում է գիպսից մոդելները զանգվածային արտադրության համար, ճիշտ է աշխատացնում սարքավորումները (խեցեգործական շրջատաշ հաստոցը, վառարանը, ձուլվածքային հաստոցը և այլն), պահպանում է սանիտարական ու հիգիենայի կանոնները:</p> |
| <p>Խնդիրների բնագավառ 2.</p> | <p>Խեցեգործական իրերի պատրաստման տեխնոլոգիական գործընթացների իրականացում</p> |
| <p>Աշխատանքային գործընթացները</p> | <ol style="list-style-type: none"> 1) Տեխնիկական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնների պահպանում անհատական աշխատանքի կատարման դեպքում, 2) ծեփագործական աշխատանք տարբեր մեթոդներով, 3) կավով պարզ, նրբագեղ և սահուն աշխատանքների պատրաստում խեցեգործական շրջատաշ հաստոցի վրա, 4) պատրաստվող աշխատանքի էսքիզի պատկերում թղթի վրա, 5) պատրաստի խեցեգործական իրերի վրա գծապատկերում, նկարում մինչ ջնարակումը և թրծումը: |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <p>ճիշտ է տեղավորում և շահագործում մեխանիկական և տեխնիկական սարքավորումները ըստ նշանակության և սահմանված չափանիշների (անհատական աշխատանքի կատարման դեպքում), կարողանում է կատարել տարբեր ձևերի խեցեգործական իրերի աշխատանքային էսքիզներ, կարողանում է կատարել տարբեր եղանակներով խեցեգործական իրերի ծեփում՝ պարզ, նրբագեղ և սահուն, կարողանում է արտանկարել կավաներկերով խեցեգործական խոնավ իրերի վրա՝ ըստ էսքիզի (անհատական աշխատանքի կատարման դեպքում), կարողանում է գծապատկերել, նկարել կիսապատրաստ արտադրանքի վրա՝ անհատական</p> |

| | |
|-----------------------------------|---|
| | աշխատանքի կատարման դեպքում: |
| Խնդիրների բնագավառ 3. | Խեցեգործական իրերի թրծման տեխնոլոգիաների իրականացում (առաջին թրծում) |
| Աշխատանքային գործընթացները | <ol style="list-style-type: none"> 1) Պահպանում է տեխնիկական անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները՝ պաշտպանիչ միջոցների կիրառում անհատական աշխատանքի կատարման դեպքում. 2) դասավորել խեցեգործական իրերը վառարանում ըստ առաջին թրծման տեխնոլոգիաների. 3) կարգավորել վառարանի ջերմաստիճանը՝ ըստ առաջին թրծման պահանջված չափանիշի (անհատական աշխատանքի կատարման դեպքում). 4) ապահովել վառարանի ջերմաստիճանի նվազումը և հովացումը (անհատական աշխատանքի կատարման դեպքում և արտադրությունում): |
| Կատարման չափանիշներ | Անվտանգ շահագործում է ջերմային սարքավորումները (անհատական աշխատանքի կատարման դեպքում), կարողանում է հավասարաչափ դասավորել խեցեգործական իրերը վառարանի մեջ, կարողանում է ճիշտ կարգավորել վառարանի ջերմաստիճանը առաջին թրծման համար (անհատական աշխատանքի կատարման դեպքում), կարողանում է ընտրել համապատասխան հովացման ռեժիմ (անհատական աշխատանքի կատարման դեպքում): |
| Խնդիրների բնագավառ 4. | Խեցեգործական իրերի ջնարակման տեխնոլոգիաների իրականացում |
| Աշխատանքային գործընթացները | <ol style="list-style-type: none"> 1) Կատարել խեցեգործական իրերի ներկերի ընտրություն (անհատական աշխատանքի կատարման դեպքում), 2) կատարել ներկման տեխնոլոգիայի ընտրություն՝ (անհատական աշխատանքի կատարման դեպքում), 3) կատարել ջնարակում (անհատական աշխատանք, զանգվածային արտադրություն): |
| Կատարման չափանիշներ | Կատարում է ներկերի ընտրություն՝ սահմանված չափանիշներին համապատասխան (անհատական աշխատանքի կատարման դեպքում). կատարում է |

| | |
|-----------------------------------|--|
| | <p>ջնարակման տեխնոլոգիայի և գործիքների ընտրություն՝ սահմանված չափանիշներին համապատասխան (անհատական աշխատանքի կատարման դեպքում), կարողանում է իրականացնել ներկման գործընթացը:</p> |
| Խնդիրների բնագավառ 5. | Խեցեգործական իրերի թրծման տեխնոլոգիաների իրականացում (երկրորդ թրծում) |
| Աշխատանքային գործընթացները | <ol style="list-style-type: none"> 1) Դասավորել վառարանում խեցեգործական իրերը երկրորդ թրծման համար՝ ըստ անհրաժեշտության և պահանջված չափանիշի (անհատական աշխատանք, զանգվածային արտադրություն). 2) կարգավորել վառարանի ջերմաստիճանը՝ ըստ թրծվող կյուրի երկրորդ թրծման պահանջված չափանիշի (անհատական աշխատանք, զանգվածային արտադրություն). 3) ապահովել վառարանի ջերմաստիճանային հովացման ռեժիմը: |
| Կատարման չափանիշներ | <p>Կարողանում է հավասարաչափ դասավորել խեցեգործական իրերը վառարանի մեջ երկրորդ թրծման համար, կարողանում է ճիշտ կարգավորել վառարանի ջերմաստիճանը՝ երկրորդ թրծման համար պահանջվող չափանիշին համապատասխան, կարողանում է ընտրել համապատասխան հովացման ռեժիմ (անհատական աշխատանքի կատարման դեպքում):</p> |
| Խնդիրների բնագավառ 6. | Խեցեգործական իրերի վերջնական մշակում |
| Աշխատանքային գործընթացները | <ol style="list-style-type: none"> 1) Խեցեգործական պատրաստի իրերի կամ արտադրանքի տեսակավորում՝ ըստ որակական չափանիշների. 2) խեցեգործական իրերի կամ արտադրանքի վերջնական (ավելորդ մասնիկների) հղկում՝ ըստ անհրաժեշտության. 3) խեցեգործական իրերի փաթեթավորում (անհատական աշխատանքի կատարման ժամանակ): |
| Կատարման չափանիշներ | <p>Ճիշտ է կատարում չափանիշներին համապատասխան խեցեգործական իրերի որակական տեսակավորումը, կատարում է խեցեգործական իրերի վերջնական հղկում, փաթեթավորում է խեցեգործական իրերը՝ ըստ</p> |

| | |
|---|---|
| | պահանջի (անհատական աշխատանքի կատարման դեպքում): |
| III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/ | խեցեգործական գեղարվեստական իրերի պատրաստողը կրում է պատասխանատվություն սարքավորումների և գործիքների, սանիտարական և տեխնիկական պայմանների, ինչպես նաև անձնական հիգիենայի ապահովման համար, անվտանգության տեխնիկայի ու հրդեհային անվտանգության կանոնների պահպանության համար, սահմանված ժամկետում պահանջվող որակյալ արտադրանքի պատրաստման և աշխատանքային պայմանագրով ստանձնած մյուս պարտավորությունների կատարման համար: |
| IV. Լեզուները | Մայրենի լեզվի ազատ իմացություն, օտար լեզվի բավարար իմացություն՝ շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար |
| V. Համակարգիչը | <ul style="list-style-type: none"> • MS Word • MS Excel • Internet Explorer |
| VI. Գիտելիքները | <p>Պետք է իմանալ.</p> <ol style="list-style-type: none"> 1) կավերի առանձնահատկությունները և տեսակները, 2) կավն աշխատանքային վիճակի հասցնելու ընթացքը՝ թրջելու, հունցելու ձևերը, 3) էլեկտրական պարզ սարքավորումների (շրջատաշ հաստոց, վառարան, չորանոց, կավխառնիչ) օգտագործման անվտանգության կանոնները, օգտագործման եղանակներն ու ձևերը՝ պահպանելով սանիտարական կանոնները, 4) խեցեգործական գործիքների (մետաղյա և փայտյա ստեկ, սպունգ, պտուտակ, խեցեգործական դանակներ) նշանակությունը, 5) գրտնակով կավաշերտ ստանալու մեթոդը, 6) կաղապարման գործընթացը, 7) օգտվել աշխատանքային էսքիզից և այն կյուբի վրա անցկացնելու ձևերը. փորագրում, քանդակում, ներկում, 8) պարզ և բարդ խեցեգործական իրերի պատրաստման ձևերը, 9) թրծման վառարանում խեցեգործական իրերը հավասարաչափ դասավորելու անհրաժեշտությունը, |

| | |
|--|---|
| | <p>10) թրծման ջերմաստիճանները, 11) խեցեգործական ներկերի առանձնահատկությունները և ներկերի թրծման ջերմաստիճանները,</p> |
| <p>VII. Կարողությունները և հմտությունները</p> | <p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) տարբերակել կավի տեսակները, 2) ջրել, հոլնցել կավը, 3) որակել հոլնցված կավը՝ նրանով աշխատելու պատրաստ վիճակը 4) աշխատեցնել էլեկտրական սարքավորումները. շրջատաշ հաստոց, վառարան, չորանոց, կավխառնիչ, 5) օգտագործել խեցեգործական իրերի պատրաստման համար նախատեսված գործիքները. սպունգ, փայտյա և մետաղյա ստեկ, պտուտակ, գրտնակ, խեցեգործական դանակներ, 6) գրտնակով ստանալ բարակ կավաշերտեր, 7) պատրաստել հեղուկ կավե զանգված, 8) լցնել հեղուկ կավը գիպսե կաղապարների մեջ, 9) կատարել աշխատանքային էսքիզ, գծապատկերել և ներկել նյութի վրա, 10) կիսապատրաստ իրը մշակել սպունգով և հղկաթղթով, 11) տարբերակել ծավալային իրերի պատրաստման տեխնոլոգիաները, 12) պատրաստել պարզ խեցեգործական իրեր, 13) հավասարաչափ դասավորել խեցեգործական իրերը վառարանում, 14) թրծել խեցեգործական իրերը, 15) ջնարակել խեցեգործական իրերը տարբեր մեթոդներով, 16) կատարել վերջնական հղկում: |
| <p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p> | <p>Պետք է ունենա.</p> <ol style="list-style-type: none"> 1) սեփական մտահղացումներն առաջարկելու կարողություն, 2) աշխատանքային առաջադրանքները ժամանակին և որակով կատարելու պատրաստակամություն, 3) հանձնարարականները ճշգրտելու կարողություն, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none">4) անհատական և խմբային աշխատանքները կատարելու կարողություն,5) մարդկանց հետ շփվելու կարողություն,6) բնության պահպանման և շրջակա միջավայրը չաղտոտելու հակում: |
|--|---|